Հավելված N 1
ՀՀ կառավարության 2022 թվականի
հոկտեմբերի 6-ի N 1562 - Լ որոշման

Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱՄԵՐՁ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐՈՒՄ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ 2022-2024 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության սահմանամերձ բնակավայրերում ընտանիքների բնակարանային մատչելիության ապահովման պետական աջակցության 2022-2024 թվականների ծրագրի շրջանակներում շահառուներին տրամադրվող հիփոթեքային վարկերի ամենամսյա վճարների (մայր գումարի և տոկոսագումարի) մարմանն ուղղված աջակցության գումարների տրամադրման և օգտագործման հետ կապված հարաբերությունները:

2. Սույն կարգում կիրառվող հասկացություններն ունեն հետևյալ իմաստը՝

1) **ծրագիր՝** Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի հունիսի 9-ի N 842-Լ որոշմամբ (այսուհետ՝ որոշում) հաստատված՝ Հայաստանի Հանրապետության սահմանամերձ բնակավայրերում ընտանիքների բնակարանային մատչելիության ապահովման պետական աջակցության 2022-2024 թվականների ծրագիր.

2) **ծառայություն՝** Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միասնական սոցիալական ծառայություն.

3) **հիփոթեքային վարկ՝** Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 18-ի N 1444-Ն որոշման N 1 հավելվածով հաստատված՝ սոցիալական աջակցություն ստացող սահմանամերձ համայնքների բնակավայրերի ցանկում ընդգրկված գյուղական բնակավայրում անհատական բնակելի տուն կառուցելու կամ կառուցապատումը շարունակելու (ավարտին հասցնելու) նպատակով սույն կարգն ուժի մեջ մտնելուց հետո տրամադրված վարկ.

4) **գործընկեր կազմակերպություն՝** Հայաստանի Հանրապետությունում գործող առևտրային բանկեր, վարկային կազմակերպություններ, որոնք ծրագրի շրջանակներում ծառայության հետ կնքել են համագործակցության պայմանագիր.

5) **շահառու՝** Հայաստանի Հանրապետության բնակչության պետական ռեգիստրում հաշվառում ունեցող ամուսիններ, որոնցից առնվազն մեկը ծրագրին դիմելու օրվա դրությամբ ունի Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն և սույն կարգն ուժի մեջ մտնելուց հետո կնքել է հիփոթեքային վարկի պայմանագիր՝ գործընկեր կազմակերպություններից որևէ մեկի հետ.

6) **աջակցության գումար՝** հիփոթեքային վարկի ամենամսյա վճարների (մայր գումարի և տոկոսագումարի) մարմանն ուղղված գումարի սուբսիդավորում ծառայության կողմից՝ որոշմամբ հաստատված հավելվածի 11-րդ կետով սահմանված սահմանաչափերով.

7) **հաշիվ՝** կազմակերպության բանկային հաշիվ, որին ծրագրի շրջանակներում ծառայությունը փոխանցում է աջակցության գումարը.

8) **համագործակցության պայմանագիր՝** որոշմամբ սահմանված ծրագրի շրջանակներում ծառայության և գործընկեր կազմակերպության միջև կնքված պայմանագիր.

9) **սահմանամերձ բնակավայր՝** Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 18-ի N 1444-Ն որոշման N 1 հավելվածով հաստատված՝ սոցիալական աջակցություն ստացող սահմանամերձ համայնքների բնակավայրերի ցանկում ընդգրկված գյուղական բնակավայր:

2. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

3. Պոտենցիալ շահառուին ծրագրում ընդգրկելու համար գործընկեր կազմակերպությունը, նախքան նրա հետ հիփոթեքային վարկի պայմանագիրը կնքելը, համապատասխան ծրագրային ապահովման միջոցով ծառայությանը տրամադրում է տեղեկանք, որում ներառվում է առնվազն հետևյալ տեղեկատվությունը՝

1) պոտենցիալ շահառուի և ամուսնու անունը, ազգանունը, հայրանունը և անձը հաստատող փաստաթղթի տվյալները (սերիան, համարը), ամուսնության վկայականի համարը (ամուսնության վկայականի պատճենը կցվում է).

2) կառուցվող բնակելի անշարժ գույքի գտնվելու վայրը (բնակավայրը, հասցեն).

3) հիփոթեքային վարկի գումարի չափը, վարկի ժամկետը, վարկի տրամադրման փուլերի համամասնությունը.

4) հավաստում այն մասին, որ կառուցապատվող անշարժ գույքի (բնակելի տան) նկատմամբ սեփականության իրավունքն օրենքով սահմանված կարգով պետք է գրանցվի շահառուի անվամբ.

5) հաշիվը.

6) պոտենցիալ շահառուի կողմից տրամադրված՝ հետադարձ կապի էլեկտրոնային փոստի հասցեն:

4. Սույն կարգի 3-րդ կետով նախատեսված տեղեկանքն ստանալուց հետո 8 աշխատանքային օրվա ընթացքում որոշմամբ սահմանված ծրագրի պահանջները բավարարող պոտենցիալ շահառուն համապատասխան ծրագրային ապահովման միջոցով՝ ինքնաշխատ եղանակով ստանում է շահառուի կարգավիճակ:

5. Շահառուի կարգավիճակ շնորհվում է՝ ծրագրի պայմաններին և պահանջներին համապատասխանությունն ստուգելու, ինչպես նաև քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմիններից ինքնաշխատ եղանակով շահառու ամուսինների ամուսնության պետական գրանցման վերաբերյալ տեղեկատվությունը 5 աշխատանքային օրվա ընթացքում ստանալու արդյունքում:

6. Շահառուի կարգավիճակ շնորհելու (կամ ծրագրի որևէ պայմանին չբավարարելու հիմքով մերժելու) դեպքում մեկօրյա ժամկետում ծառայությունը դրա մասին համապատասխան ծրագրային ապահովման միջոցով ծանուցում է ուղարկում շահառուին՝ վերջինիս տրամադրած էլեկտրոնային փոստի հասցեով, ինչպես նաև գործընկեր կազմակերպությանը:

7. Շահառուի՝ ծրագրում ընդգրկվելու վերաբերյալ էլեկտրոնային տեղեկացումն ստանալուց հետո գործընկեր կազմակերպությունը շահառուի հետ կնքում է հիփոթեքային վարկի պայմանագիրը, որից հետո 2 աշխատանքային օրվա ընթացքում

համապատասխան ծրագրային ապահովման միջոցով ծառայությանն է տրամադրում շահառուի հիփոթեքային վարկի պայմանագրի և վարկի գծով վճարման ժամանակացույցի էլեկտրոնային (բնօրինակից լուսապատճենված) տարբերակը, այդ թվում՝ վարկի փուլային ֆինանսավորման ժամկետներն ու համամասնությունը: Ընդ որում, յուրաքանչյուր փուլը կարող է լինել առանձին վարկի տեսքով՝ տրամադրված նույն գլխավոր վարկային պայմանագրի շրջանակներում:

8. Ծառայությունն ամսական պարբերականությամբ կազմակերպության հաշվին է փոխանցում աջակցության գումարները՝ ըստ սույն կարգի 7-րդ կետի ստացված ժամանակացույցի:

9. Վարկի ֆինանսավորման 1-ին և 2-րդ փուլերի ավարտից հետո գործընկեր կազմակերպությունը, նախքան վարկի հաջորդ փուլի ֆինանսավորումը, համապատասխան ծրագրային ապահովման միջոցով ծառայությանն է տրամադրում նախորդ փուլով տրամադրված վարկի գումարի նպատակային օգտագործման մասին տեղեկատվություն:

10. Եթե սույն կարգի 9-րդ կետով ստացված տեղեկացման համաձայն առկա են վարկավորման նախորդ փուլում վարկային միջոցների ոչ նպատակային օգտագործման մասին տեղեկություններ, ապա ծառայությունը դադարեցնում է ժամանակացույցով նախատեսված հաջորդող ամիսների աջակցության գումարները: Աջակցության գումարների փոխանցումները վերականգնվում են գործընկեր կազմակերպության կողմից վարկավորման նախորդ փուլում վարկային միջոցների նպատակային օգտագործման մասին հավաստում ստանալուց հետո:

11. Ծառայությունը դադարեցնում է ժամանակացույցով նախատեսված հաջորդող ամիսների աջակցության գումարները նաև այն դեպքում, եթե ի հայտ են եկել ծրագրի 13-րդ կետի 1-6-րդ ենթակետերով սահմանված դեպքերը:

12. Ծառայության կողմից ժամանակացույցով նախատեսված վճարումները (աջակցության գումարի սահմանաչափին համապատասխան) չիրականացնելու դեպքում ժամկետանց պարտավորությունների համար տույժերը, տուգանքները վճարում է ծառայությունը:

13. Ծառայությունը յուրաքանչյուր շահառուի համար ամսական պարբերականությամբ հաշվին փոխանցում է միայն որոշման հավելվածի 11-րդ կետով նախատեսված սահմանաչափին համապատասխան աջակցության գումարը: Եթե հիփոթեքային վարկի գծով ամսական վճարները (մայր գումար և տոկոսագումար) գերազանցում են աջակցության գումարի սահմանաչափերը, ապա սույն կարգի 7-րդ կետում նշված ժամանակացույցով սահմանված ամսական վճարների և աջակցության գումարի տարբերությունը վճարվում է շահառուի կողմից:

14. Գործընկեր կազմակերպության և ծառայության միջև տեղեկատվության փոխանակության հետ կապված հարաբերությունները կարգավորվում են համագործակցության պայմանագրով:

15. Ծրագրի իրականացման գործընթացի ուղեկցումն իրականացվում է համապատասխան ծրագրային ապահովման միջոցով: Մինչև ծրագրային ապահովման ներդրումը գործընթացն իրականացվում է մեխանիկական եղանակով, իսկ ծրագրի իրականացման համար անհրաժեշտ տեղեկությունները ծառայության և գործընկեր կազմակերպությունների միջև փոխանակվում են Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից սահմանված միջոցներով (Սի-Բի-Էյ-Նեթ ֆինանսական կամ այլ բնույթի էլեկտրոնային տեղեկատվության փոխանակման համակարգ):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

06.10.2022
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ